


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅՍՕՐԿԱ ՄՈՂԵԼԸ ԱՆՏԱՌԻ ՕՐԵՆՔՆ Է

Posted on August 3, 2009 by Keghart



Category: [Opinions](#)



Սոնա Ավագյան, **Հենք**, 27 Հուլիս 2009

✘ «Հենքի» հարցերին պատասխանում է Կանադայի «Նախիջևան» գիտաուսումնական կենտրոնի նախագահ, Մոնրեալի համալսարանի միջազգային հարաբերությունների մագիստրոսության թեկնածու, քաղաքագետ **Անդրանիկ Պետրոսյանը**:

Պրն. Պետրոսյան, ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի գլոբալ մասշտաբները ի՞նչ են հուշում՝ սա միայն ֆինանսատնտեսակա՞ն ճգնաժամ է, թե՞ նաև ուրիշ ճգնաժամերի համախումբ է:

Ներկա ֆինանսական-տնտեսական ճգնաժամը խորքին մեջ առաջին հերթին կնշանակե համակարգի ճգնաժամ: Կապիտալիզմի ներկա տարբերակի՝ նեոլիբերալիզմի կամ նոր ազատական կապիտալիզմի ճգնաժամն է:

Սոնա Ավագյան, **Հենք**, 27 Հուլիս 2009

✘ «Հենքի» հարցերին պատասխանում է Կանադայի «Նախիջևան» գիտաուսումնական կենտրոնի նախագահ, Մոնրեալի համալսարանի միջազգային հարաբերությունների մագիստրոսության թեկնածու, քաղաքագետ **Անդրանիկ Պետրոսյանը**:

Պրն. Պետրոսյան, ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամի գլոբալ մասշտաբները ի՞նչ են հուշում՝ սա միայն ֆինանսատնտեսակա՞ն ճգնաժամ է, թե՞ նաև ուրիշ ճգնաժամերի համախումբ է:

Ներկա ֆինանսական-տնտեսական ճգնաժամը խորքին մեջ առաջին հերթին կնշանակե համակարգի ճգնաժամ: Կապիտալիզմի ներկա տարբերակի՝ նեոլիբերալիզմի կամ նոր ազատական կապիտալիզմի ճգնաժամն է:

Այս համակարգի ձախողման հետ կան նաև այլ ձախողումներ և այլ ճգնաժամեր, որոնցմե մեկը Էներգիայի ճգնաժամն է. աշխարհը չափազանց կգործածե որոշ բաներ, և այդ ուղղությամբ պատերազմներ և մրցակցություն կա: Կա նաև ուտելիքի ճգնաժամ: Ժողովուրդները ամբողջ կրնան սովի մատնվիլ, և կրկին պատճառը մեծերու և որոշ կապիտալիստական շրջանակներու աշխատանքն է: Ասոր հետ կա նաև բնապահպանական ճգնաժամը, որը արդյունք է մասամբ մարդու անտարբերության և, անշուշտ, նաև դրամատիրական շրջանակներու գերշահույթի վազքի պատճառով բնության քայքայման և չարաշահման:

Դուք նշեցիք, որ ճգնաժամը կապված է կապիտալիզմի հետ և կապիտալիզմի բացասական կողմերը նշեցիք: Իսկ դրական կողմեր կապիտալիզմն ունի՞:

Կապիտալիզմն ունեցած է դրական կողմեր այն իմաստով, որ կապիտալիզմը՝ որպես գործ ստեղծող, արդյունաբերություն ստեղծող առաջադիմական հասարակություն,

Նկատված էր որոշ ազդակ 19-րդ և 20-րդ դարու որոշ ժամանակաշրջանին:

Եթե կապիտալիզմը ունեցած է դրական կողմեր Արևմուտքի մեջ, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմեն վերջ, ադիկա կապիտալիզմի պատասխանատուներուն անձնական խղճամտության արդյունքը չէ, այլ արդյունք է առաջին հերթին ժողովրդային շրջանակներու կազմակերպված շարժումներուն, արևմտյան պայքարներուն, որ կըսենք սոցիալական շարժում: Այսինքն՝ կապիտալիզմը ստիպված էր ընդունիլ, որ պետք է աշխատավորներուն լավ նայի, լավ աշխատանքային պայմաններ ստեղծի: Եվ սոցիալ-դեմոկրատիայի կուսակցություններու պայքարը և կոմունիզմի վախը մղեցին այդ դրամատիկական շրջանակներու Արևմուտքի մեջ համաձայնվիլ, որ ստեղծեն կապիտալիզմի և սոցիալիզմի խառն համակարգ մը, որ բոլորին կգոհացներ: Արդվ ստեղծվեցավ հավասարակշռված սիստեմ մը 30-40 տարի Արևմտյան Եվրոպայի մեջ, որոշ չափով՝ Կանադայի և Ամերիկայի մեջ:

Կապիտալիստական շրջանակները այսօր կմերժեն ժողովուրդներուն մասին մտածել, այլ միմիայն կմտածեն հարուստ շրջանակներու կամ փայտերերու շահերուն մասին, ինչը կմղե ըսել, որ «մենք պարտավոր չենք գործավոր պահել, մենք կերթանք դեպի Ասիա, ուր հազարավոր մարդիկ ունեն գինով մեզի աշխատին»: Ուրեմն, կապիտալիզմը այսօր դադրած է դրական ըլլալէ, ընդհակառակը՝ կմտնա ժխտական փուլին մեջ ամբողջ աշխարհի համար:

Հակասությունն չկա՞ նրանում, որ մի կողմից կապիտալիստական երկրները հայտնի են որպես Արևմտյան Եվրոպայի ժողովրդավարական, ամենից զարգացած երկրները, իսկ մյուս կողմից՝ կապիտալիզմն այլևս մարդկանց մասին չի մտածում:

Արևմտյան Եվրոպայի կապիտալիստական երկիրները խառն համակարգ է, զուտ կապիտալիզմ չէ: Սոցիալական պայքար եղած է, սոցիալ-դեմոկրատիայի, սոցիալիզմի որոշ տարրեր մտած են Արևմտյան Եվրոպայի կապիտալիստական սիստեմի մեջ, ինչ որ ստեղծած է մի համակարգ, որ կապիտալիզմին տված է մարդկային դիմագիծ:

Երկրորդ՝ ժողովրդավարությունը բնավ կապ չունի կապիտալիզմին հետ: Ժողովրդավարությունը ինքնին արժեք մըն է, որուն ամեն ժողովուրդ կամ ամեն տարածաշրջան ցանկացած է, և կապիտալիզմը հավակնած է ըսել, թե «իրենք են ժողովրդավարություն ներկայացնողը», երբ այդպես իրականությունը չէ: Խորքին մեջ այսօրվա վիճակը Արևմուտքի մեջ ցույց կուտա, որ դեմոկրատիան և կապիտալիզմը միասին չեն երթար:

Եվ ասիկա օգտագործվեցավ, որովհետև Խորհրդային Միության մեջ, ուր դեմոկրատիա չկար, սոցիալիզմի անունով խոսվեցավ: Այսօր մենք շատ լավ գիտենք, որ առանց դեմոկրատիայի՝ ընկերվարություն՝ սոցիալիզմ, չըլլար: Ուրեմն իրենք օգտագործեցին Սովետական Միության այսպանելի համակարգը արդարացնելու համար, թե «իրենք են դեմոկրատիան»: Մենք այսօր գիտենք, որ Խորհրդային Միության փլուզումեն վերջ կարգը

Եկած է արևմտյան համակարգի փլուզումին, որ նույնպես իր տկարությունները ուներ, և մեկու անկումով մյուսին անկումն է, որ կպատրաստվի այսօր:

Ձեր գնահատմամբ՝ ո՞ր մոդելն է ավելի ժողովրդավարական կամ ամենաժողովրդավարականը:

Ու՛է ժողովրդավարական մոդել պետք է ընդունվի բնակչության մեծամասնության կողմէ և ստեղծե աշխարհի ու՛է մեկ շրջանի բնակչության համար տանելի, ընդունելի պայմաններ և մարդկային վերաբերմունք: Միստեմ մը, որ տևական մրցակցության մասին կխոսի և վայրի մրցակցության, ուր ու՛ժի վրա կհիմնվի, ուր գորավորին կամքն է, որ կգործադրվի, չի կրնար ժողովրդավարական ըլլալ, և այսօրվա կապիտալիզմը, նեոլիբերալիզմը գորավորի ու՛ժին վրա կեցած է: Կապիտալիզմը իր ներկա ընթացքով մարդկայնության չերթար, այլ կերթա բարբարոսության:

Ընդհակառակը՝ այն համակարգը մարդկային կրնա ըլլալ, որ մարդկության, բնակչության ի նպաստ կաշխատի և ոչ թե փոքրամասնության: Եվ ադ համակարգը տեսականորեն պետք է ըլլա սոցիալիզմը:

Սակայն խորհրդային Միության սոցիալիզմը ձախողվեցավ ճիշտ ադ պատճառով, որ համակարգը չդրվեցավ ժողովրդավարական հիմքերու վրա, այլ վերևից պարտադրվեցավ: Եվ ճիշտ ասոր համար է, որ այսօր աշխարհի մեջ այս ներկա սիստեմին բարեփոխության բոլոր կողմնակիցները կըսեն, որ «մենք պետք է սկսինք ժողովրդավարությունը ներքևից»: Երբ ներքևից ժողովրդավարություն կսկսինք, կնշանակե, որ ժողովուրդին պահանջներուն ականջ կկախենք: Երբ ժողովուրդին պահանջներուն ականջ կկախենք, տնտեսական և քաղաքական ու՛ժ ունեցողները ստիպված են զիջիլ, որովհետև իրենք փոքրամասնություն կներկայացնեն: Իսկ եթե ժողովուրդին պահանջքը հասնի տեղ մը, կնշանակե, որ սոցիալական արդարությունը, ժողովուրդին՝ մարդկային կյանք ապրիլը, մարդկային դիմագիծով հասարակություն ունենալը կդառնա տիրապետող:

Այսօր մենք կգտնվինք ռեգրեսիայի մեջ: Եթե աս վիճակը շարունակվի, ստեղծված կացությունը բոլոր ժողովուրդներուն ալ վտանգավոր է: Մարդկության, մոլորակի ապագան վտանգված է:

Ի՞նչ իմաստով է վտանգված:

Բնության քայքայում, և բնական է՝ ժողովուրդներու մեծամասնության վատ պայմաններու մեջ ապրելու վիճակը, ստրկացած վիճակը: Կապիտալիզմը այսօր դեպի ստրկացման կտանի:

Այսօրվա նեոլիբերալիզմի քարոզչությունը, որ Ամերիկայեն կուգա, կըսե՝ «պայքար, մրցիլ մինչև մահ»: Այսինքն՝ տեղ չի ձգեր համերաշխության, համագործակցության: Համագործակցությունը մարդկային է: Իսկ վայրի մրցակցությունը, վայրի բախումները,

որ ամերիկացիները այսօր կուզեն աշխարհին պարտադրել հանուն կապիտալիզմի, ամբողջ աշխարհի հասարակ ժողովուրդներուն վտանգավոր է, նույնիսկ ամերիկացի ժողովուրդի համար:

Սոցիալիզմը չի՞ ենթադրում այդպիսի վայրի մրցակցություն:

Բուն սոցիալիզմը չի ենթադրեր: Հիմա հարցը հոն է, որ դարերու աշխատանք պետք է: 19-րդ, 20-րդ դարու սոցիալիզմը ունեցավ որոշ ձեռքբերումներ, ունեցավ նաև ձախողություններ, որովհետև միակողմանի կերպով մեկնաբանվեցավ որոշ շրջանակներու կողմե, և ադ մեկնաբանությունը պարտադրվեցավ: Եվ պարտադրությունը պատճառ դարձավ, որ սիստեմը չդառնա ժողովրդավարական: Կարելի չէ սոցիալիզմ հիմնել՝ առանց ժողովրդավարության: Ադիկա մեզի կհասցնե տոտալիտարիզմի:

Դուք իրատեսակա՞ն եք համարում, որ սոցիալիզմ կլինի, և որքա՞ն ժամանակում դա կլինի:

Ադիկա սերունդներու աշխատանք է, որ պիտի ըլլա: Սոցիալիզմը պիտի դնեք հեռավոր նպատակ, ինչպես որ կապիտալիզմը 400-500 տարի է գոյություն ունի: 400-500 տարվա մեջ կապիտալիզմը ըրավ ձեռքբերումներ, ունեցավ ձախողություններ: Սոցիալիզմը նոր սկսավ: 150 տարվա պատմություն է, և յուրաքանչյուր սերունդ պիտի իրականացնե, որքան որ կրնա ընել, մինչև որ կարողանան ստեղծել համակարգ մը աշխարհի համար, որ ավելի մարդկային և տանելի ըլլա:

Ձեր գնահատմամբ՝ ո՞ր մոդելն է ավելի ձեռնտու Հայաստանին և կնպաստի նրա զարգացմանը:

Հայաստանի համար ձեռնտու մոդելը այն է, որ Հայաստանի ժողովուրդին համար կստեղծե զարգացման մակարդակ և մարդկային հասարակություն մը: Այսինքն՝ Հայաստանի բոլոր քաղաքացիները իրարու փոխանակ հարվածելու՝ միասին կաշխատին թե՛ յուրաքանչյուրին հառաջադիմության և թե՛ երկրին հառաջադիմության համար: Եվ այդ մոդելը միայն կրնա սոցիալական ուղղվածությամբ մոդել մը և ոչ թե կապիտալիզմի և ծայրահեղ մրցակցության մոդելը, ուր միայն անտառի օրենքը կտիրապետե:

Հայաստանի այսօրվա մոդելը անտառի օրենքն է: Անտառի օրենքով Հայաստան կարելի չէ կառուցել: Եվ պետք է գիտնալ, որ այսօրվան Հայաստանի կառուցումը միայն քանի մը հոգիի համար չէ, ամբողջ Հայաստանի ժողովուրդի համար պետք է ըլլա և ամբողջ աշխարհի հայության, քանի որ մեր միակ հայկական հողակտորն է, որ մեր ձեռքն է՝ Արցախի հետ միասին:

Այսօրվա Հայաստանի պատասխանատուները, օլիգարխները այդ գիտակցությունը չունին: Օլիգարխները կկարծեն, որ իրենց անձնական «դաշան» կշինեն ամբողջ

Հայաստանին մեք: Եվ աս մտայնությունը պետք է փոխվի:

Դուք տեսնու՞մ եք տեղաշարժ, որ փոխվում է այդ մտայնությունը:

Օլիգարխներու մոտ այդ մտայնությունը չէ փոխված: Բայց կրնա փոխվիլ, եթե ժողովրդային կազմակերպված շարժում ըլլա՝ որպես քաղաքացիական հասարակություն, իրավունքներ պահանջելու, ձեռքբերումներ ունենալու. երբ ժողովուրդը կկազմակերպվի և պահանջներ կդնէ, որ «մենք այս կուզենք: Պիտի ընեք: Եթե չընեք, պիտի իջնաք ձեր աթոռն ընտրություններու ճամփով»:

Իսկ եթե ընտրությունները ոչ օրինական ձևով են անցնում...

Ուրեմն ժողովուրդը պիտի մտածե՝ ինչ ձևերով կրնա իր ձայնը լսելի դարձնել այս երկրին մեք:

Ինչպե՞ս կարելի է լսելի դարձնել:

Ադիկա Հայաստանի ժողովուրդին կմնա, նոր սերունդներուն հատկապես՝ մտածեն, դասավորեն, ստեղծեն իրենց մեք ղեկավարություն մը, որ այս բոլոր հարցերը կքննէ, կհետևի աշխարհի փորձին և շարժումներուն և կստեղծէ պետք եղածը:

Բայց պետք է գիտնաք, որ աշխարհի փորձը ցույց կուտա, որ իշխանության վրա գտնվող ուէ ուժ, որ կտեսնի, որ ներկա կացությունը իրեն ձեռնտու է, թույլ պիտի չտա, որ այդ ժողովրդային շարժումը տեղ հասնի, ինչ որ կստեղծէ հակադրություն: Պիտի օգտագործեն բանակը, ոստիկանությունը, մահակի պես ժողովուրդին գլխուն զարնին, ինչպես կպատահի Լատինական Ամերիկայի մեք կամ Երրորդ աշխարհի երկիրներուն մեք: Ասիկա եղած է շատ հաճախ, և Հայաստանը աս կացության առջև է: Կամ սերունդները առաջին տասնամյակին կազմակերպված ձևով միջոցներ կառնեն այս կացությունը սրբագրելու և Հայաստանի կառուցումը ավելի դրական ճանապարհի վրա դնելու, որ քանի մը սերունդներու հարց է, կամ Հայաստանը շատ պայթուցիկ կացության առջև կրնա գտնվիլ, եթե ձախողին:

Օրինակ՝ ի՞նչ կարող է լինել:

Պայթյունավտանգ, որ ժողովրդային շարժումը ստիպված ըլլա դիմելու զինական միջոցներու՝ երկրին կացությունը սրբագրելու համար:

Ապստամբություն՞ն նկատի ունեք:

Ժողովրդային արդար ապստամբություն: Ներկայիս ադիկա չեմ ցանկար ոչ մեկ ձևով: Բայց անոնք, որոնք աս երկիրը կքայքայեն, կթալանեն, տակավին խելքերնին գլուխնին չէ եկած, որ եթե ադիկա շարունակեն, ադիկա ի վնաս երկրին է և նույնիսկ ի վնաս իրենց է: Սա պետք է հասկացնել այդ իշխանավորներին, որ բռնանալով, մահակով ժողովուրդին վախցնելով աս երկիրը չեն կարող կանոնավոր պահել:

Հայաստանի մոդերն Դուք ի՞նչ բառով կբնորոշեք:

Հայաստան հստակ մոդերն մը չունի ներկայիս. քիչ մը հիներն ժառանգություն կա, քիչ մը դուրսեն փոխառնված կա: Ոչ մեկ մոդերն կա այստեղ, որ հստակ դեպի լավ կտանի: Եվ անոնք, որոնք պաշտոնի վրա են, ընդհակառակը՝ մոդերներ փոխառած են, որ Հայաստանի համար նպաստավոր չէ, ինչպես վարչապետին նկատելով՝ «Հայաստան պետք է արդյունաբերության նվազ ըլլա և ավելի գիտական միտքի վրա դնել»: Ադիկա ձեռնտու է Ամերիկային, ոչ Հայաստանին, որովհետև Հայաստանի պարագային մենք կունենանք ուղեղներու արտահոսք: Երբ որ արդյունաբերություն չունենանք, ուրիշին արդյունաբերության վրա պիտի մնանք: Այսինքն՝ Հայաստան ձգված է ուրիշին գթառատության, և այդ բացարձակապես սխալ է: Հայաստան պետք է ունենա իր արդյունաբերությունը, իր ներքին տնտեսությունը, ինքնաբավությունը հնարավորին սահմաններուն մեջ:

Այսինքն՝ Հայաստանի իշխանությունները, վարչապետն ալ որդեգրած են նեոլիբերալ տնտեսական մոտեցում, որ ժողովուրդին ի նպաստ չէ:

Ի՞նչ եք կարծում՝ նեոլիբերալիզմը՝ կապիտալիզմը, հեշտությամբ կգիշի իր դիրքերը մեկ այլ մոդերնի:

Ոչ, առանց պայքարի չի գիշիր: Ոչ մեկ տեղ կապիտալիզմը գիշած է հեշտությամբ: Եվրոպայի փորձն ալ ցույց կուտա ադիկա: Պայքար եղած է:

Ո՞ր երկրներում է այժմ ամենից ակտիվ պայքարը:

Լատինական Ամերիկայի մեջը, հատկապես Վենեսուելա, Բոլիվիա, Էկվադոր, որոշ չափով՝ Նաև Արժանքին և Բրազիլ: Բայց առաջին գիծին վրա Վենեսուելան է:

Հաջողություններ նկատվե՞լ են:

Այո, հաջողությունը ան է, որ ժողովրդային շարժումի պատճառով Չավեսը կարողացավ քաղաքականություն մը մշակել, որ կապիտալիստները չէին ուզեր, բայց ժողովուրդի մեծամասնությունը կուզեր: Այսինքն՝ ստեղծեցին ձրի ուսման կենտրոններ, ձրի բժշկության կենտրոններ:

Սխալներ, հավանաբար, կան, ձախողություններ, քննադատություններ ալ կան: Բայց կան ձեռքբերումներ, որ այսօր Վենեսուելայի ռեժիմին կռնակը ժողովուրդային դասակարգն է: Երբ որ կարգը մը ընկերություններ, որոնք կգտնվեին հարուստներու ձեռքը և բանջարեղեն կարտադրեին, և կամ հաց կեփեին, կտրեցին ադիկա, որ ժողովուրդը սովի մատնեն, որ ռեժիմին դեմ ելլան, անմիջապես ռեժիմը ազգայնացուց, և այսօր այդ հարուստներուն ձեռքեն առնվեցան այդ գործարանները և պետական հսկողության տակ ժողովուրդին տրվեցան:

Այսինքն՝ հոն գործավորները մասնակից կդառնան իրենց ֆաբրիկայի, գործարանի

որոշումներով: Ասիկա նոր ծնն է, որ կգա, որ մենք կկոչենք ժողովրդավարություն
դարոցներուն մեջ, պետական վարչամեքենային մեջ, բոլոր հասարակական
կազմակերպություններու մեջ:

Հայաստանին այդ նույն՝ Վենեսուելայի՞ մոդելն է պետք, թե՞ մեկ ուրիշը:

Վենեսուելայի օրինակը կարելի չէ 100-ը 100-ին ընդօրինակել, որովհետև յուրաքանչյուր
գարգացում իր պայմաններեն կմեկնի: Հայաստան կարող է, Վենեսուելայի մոդելեն
ներշնչվելով, իր մոդելը գարգացնել՝ իր վիճակին համաձայն: Եվ հիմնականը, օրինակի
համար, որ Չավեսը կըսե, այն է, որ «Մենք Վենեսուելան կշինենք Վենեսուելայի
բաղկացուցիչ ազգություններու արժեքներուն վրա՝ տեղացի բնիկները, եվրոպացիները
և ափրիկեցի ժառանգորդները»:

Իսկ Հայաստանը պիտի գարգացնե մոդել մը, որ հայ ժողովուրդի արժեքներու մեջ
մտած է: Եվ հայ ժողովուրդի արժեքներու մեջ հափշտակություն չկա, թալան չկա,
մարդկայնություն կա, մարդկային հասարակարգ ստեղծել կա: Այդ խառնաշփոթ
կացության մեջ՝ 91-են վերջ, արկածախնդիրներն է, որ հասան ուժային դիրքերի և
սկսան աս երկիրը դեկավարել: Հայաստանի ներկա՝ 17-ամյա ուղղությունը
Հայաստանի ժողովուրդին ուզածը չէ: Հայաստանի ժողովուրդը ուրիշ բան կակնկալեր
և ուրիշ բան տեսավ:

Իսկ հիմա ի՞նչ է ակնկալում Հայաստանի ժողովուրդը:

Իրենք կուզեն գործ, տանելի կյանք, մարդկային բաներ, և տակավին մեր ժողովուրդին
մեջ չէ գարգացած նույնիսկ ընկերային արդարության գաղափարը: Սոցիալական
արդարությունը կարևոր է և հարստության վերաբաշխում կենթադրե. որ աղքատին,
տարիքավներուն պետք է նայիլ, ոչ թե երեսին վրա ձգել, հիվանդներուն պետք է
դարմանել: Ձրի դարմանումը կամ պետական ֆինանսավորումով դարմանումը կարևոր
է: Մենք Կանադային մեջ ունինք ադի՝ կապիտալիստ ըլլալով հանդերձ: Ուսումը պետք է
ծրի ըլլա, և համալսարանի մակարդակին ալ այնպիսի գումարներով, որ կարենան
ուսանողները օգտվիլ:

Արևմտյան Եվրոպայի, Կանադայի, Ամերիկայի մեջ պատահածները ցույց կուտան, որ
դեմոկրատիայի համար պայքարը մշտական է: Այսինքն՝ ժողովուրդին ծոցեն եկած
կազմակերպությունները միշտ պիտի պայքարին սերունդներե սերունդ: Այսօր ասիկա
ձեռք բերինք, այս բանը շահեցանք, այս իրավունքը ունեցանք, չի նշանակեր հանգիստ
նստիլ, պառկիլ (ինչ որ պատահեցավ Արևմուտքին մեջ), որովհետև օր մը կրնան մեզի
գալ, ըսել, որ «Ադ ձեզի տրվածը իրավունք չէր. մենք բարեհաճեցանք ձեզի տալ»:

Մինչ իրականության մեջ ադոնք պետք է իրավունք ըլլան: Եվ նույնիսկ եթե իշխողները
ժողովուրդեն եկած են, կրնան սխալիլ: Ուրեմն՝ միշտ պետք է ժողովուրդը
կազմակերպված ըլլա:

Ձեր գնահատմամբ՝ շարքային հայաստանցին ուզում է մշտապես պայքարել, թե՞ ուզում է հանգիստ կյանքով ապրել:

Ժողովուրդը այսօր պասիվ վիճակի մեջ է մասամբ, և հույս չունի, թե եկողները կրնան սրբագրել կացությունը: Եթե վարեն ժողովրդային շարժում մը գա, որը ունենա իր դեկավարությունը, դեկավարություն մը, որ ձեռքերը մաքուր է, որուն կարելի է վստահիլ և որոնք պիտի չընեն նույնը, ինչ որ մյուսները կընեն, կկարծեմ, որ ժողովուրդը կսկսի ադ ուղղությամբ շարժվել, որովհետև այս ժողովուրդը անպայման կուզե, որ բարելավում ըլլա: Բայց պետք է հասկանա, որ այս բարելավումը չի կրնար ըլլալ պասիվ նստելով, կամ սպասե, որ աս սիստեմը բարելավվի, ու աս սիստեմը պիտի չբարելավվի, որովհետև անոնք, որոնք այս սիստեմն կօգտվին, չեն ուզեր բարելավում. իրենց նպաստավոր է:

Այսինքն՝ ժողովրդին ուղղակի կազմակերպող է պետք:

Կազմակերպող է պետք: Նախ՝ պետք է միտքեր ըլլան, վիճաբանություններ ըլլան, բանավեճեր ըլլան, մարդիկ քով-քովի գան, թեր ու դեմ արտահայտվին: Ժամանակ կառնե ասիկա: Ադ արտահայտություններն պիտի տեսնաք, որ ժամանակի ընթացքին միտքերը պիտի բյուրեղանան, հստականան: Անկե վերջ կանցնի գործնականին:

